ԹԻՎ 23 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

17 փետրվարի 2026թ.
ք. Վանաձոր

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5-Ա

ՎԱՆԱՁՈՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ «ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԱՏ ԱՐՏԱԿԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Ազատ Արտակի Այվազյանի կողմից թիվ 23 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի մասին դիմումը, որը նա հաստատել է թիվ 23 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստում՝ թիվ 23 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Ազատ Արտակի Այվազյանի գրանցումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

ԹԻՎ 23 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Կ.ԴԱՎԹՅԱՆ**

Կ.Տ